

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Վահրամ Բեգլարյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն	<p>Որպես գլխավոր տնօրեն՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից, ✓ ներկայացնում է Ընկերությունը ԼՂՀ-ում և արտասահմանում, ✓ գործում է առանց լիազորագրի, ✓ տալիս է լիազորագրեր, ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ, ✓ Ընկերության Խորհրդի հաստատման է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, ✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ: <p>Որպես Խորհրդի անդամ՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:

Սպարտակ Թևոյան	Տնօրենների խորհրդի նախագահ	<ul style="list-style-type: none"> ✓ կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, ✓ գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, ✓ կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը, ✓ նախագահում է ԲԸԺ-ներում:
Էմին Օհանջանյան	Տնօրենների խորհրդի անդամ	<ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:
Արմեն Գասպարյան	Տեխնիկական տնօրեն	<ul style="list-style-type: none"> ✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրոկայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում
Ժան Հովհաննիսյան	Ֆինանսական տնօրեն	<ul style="list-style-type: none"> ✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում
Արայիկ Դավթյան	Գլխավոր հաշվապահ	<ul style="list-style-type: none"> ✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, ✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը, ✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները:

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ
2012թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ)**

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1) Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

Արժույթային ռիսկեր. Այդ ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը, ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը:

Բնակլիմայական պայմանների ռիսկեր. Բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն ընկերության գործունեության վրա: Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով: Չնայած նրան, որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ, այնուամենայնիվ, բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և հետևաբար ֆինանսական ցուցանիշները:

Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերության արտադրանքը կազմել է 21.220.630 կվտ/ժ էլեկտրաէներգիա, ինչը կազմում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մոտ 75 տոկոսը: Նշված էլեկտրաէներգիայից 17.092.800 կվտ/ժամն արտադրվել է ,ՍարսանգեՀԷԿ-ի միջոցով, իսկ 4.127.830 կվտ/ժամը՝ .Թրդի կասկադե ՀԷԿ-ի միջոցով:

Ընկերության վերցրած և մարված վարկերի ծավալները բերված են թիվ 1 աղյուսակում:

.Արցախի ՀԷԿ ԵԲԲԸ վարկերի ծավալը 2012թ. I-ին եռ.

Աղյուսակ 1

Վարկի կամ փոխառության աղբյուրը	Նոր վարկեր	Մարումներ
ՓԲԸ .Արմավիսբանկե	-	16,666,666.5 ՀՀ դրամ
ՓԲԸ.Արցախբանկե	-	415,449.35 USD
Ֆ/ա Բ. Բեգլարյան	-	100,000,000 ՀՀ դրամ

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում.

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2012թ. I եռ.

Աղյուսակ 2

Ցուցանիշ	Հազ.դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	228136
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-108736
Իրացման ծախսեր	-371
Վարչական ծախսեր	-44527
Գործառնական գործունեությունից շահույթ	74332
2012թ. առաջին եռամսյակի շահույթ	32151
Դերհտորական պարտք	820077
Կրեդիտորական պարտք	3372702

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2012թ. I եռ.

Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	01.04.2012թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով(EPS)	3.02
Սեփական կապիտալի շահութաբերություն(ROE)	2.7%
Ակտիվների շահութաբերություն(ROA)	2.1%
Զուտ շահույթի մարժա(NPM)	14.1%
Կապիտալի համարժեքության գործակից	77.8%
Ֆինանսական կախվածության գործակից	28.5%
Բացարձակ իրացվելության գործակից	0.07
Ընթացիկ իրացվելության գործակից	1.3
Ընդհանուր իրացվելության գործակից	1.4
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.68
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	540.68
Պաշարների շրջանառելիության գործակից	2.7
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	134.27
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.31
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	11786.2

Հաշվետու եռամսյակի համար Ընկերությունը կառանձնացներ հետևյալ իրադարձությունները:

- 2012թ. հունվարի 05-ին Հայկական երկու Հանրապետությունների նախագահների մասնակցությամբ տեղի է ունեցել . Թրդի -2 ՀԷԿ-ի հանդիսավոր բացումը:

- 2012թ. փետրվարի 07-ին, տնօրենների խորհրդի անդամների հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը, որի ժամանակ որոշվեց Ընկերության 2012 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Ս. Թևոսյան – Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ
2. Է. Օհանջանյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ
3. Ա. Պետրոսյան - Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ

. 2012թ. մարտի 24-ին տնօրենների խորհրդի անդամների անձնական մասնակցությամբ տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստը:

Ընդունվեցին հետևյալ վորոշումները՝

1. Հաստատել «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԳԻՏ» ՓԲԸ թեկնածությունը, որպես Ընկերության 2012 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպություն և ներկայացնել Ընկերության ընդհանուր ժողովին:

2. 2012թ. ապրիլի 30-ին, ժամը 11:00-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Թումանյան 63. հասցեում գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

3. Բաժնետերերի գրանցման ամսաթիվ և ժամ սահմանել 2012թ. ապրիլի 30-ին ժամը 10:00, իսկ վայր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Թումանյան 63:

4. Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2012թ. մարտի 24-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

5. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը:

. 2012թ. ապրիլի 30-ին տեղի ունեցավ Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողով:

Ընդունվեցին հետևյալ վորոշումները՝

1. Հաստատել «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԳԻՏ» ՓԲԸ-ին, որպես 2012 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ:

2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2011 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, գուտ շահույթի բաշխման համամասնությունները, այդ թվում՝ շահութաբաժինների մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 5 % տարեկան եկամտաբերության հաշվարկով, մասհանումներ Գլխավոր պահուստին՝ գուտ շահույթի 5%-ը, չբաշխված շահույթ 16 928 000 (տասնվեց միլիոն ինը հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ:

3. 2011 թվականի արդյունքներով ընկերության բաժնետերերին վճարել շահութաբաժիններ՝ 1 բաժնետոմսին 50 (հիսուն) ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով 2012թ. մայիսի 21-ից:

4. Հաստատել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ կանոնադրության փոփոխությունը (տնօրենների խորհրդի քանական կազմի փոփոխություն): Ընկերության գլխավոր տնօրենին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ռեզիստրի Ստեփանակերտի տարածքային բաժին ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը՝ նշված փոփոխությունը օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:

5.«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհուրդը ընտրել հետևյալ կազմով՝

1. Թևոյան Սպարտակ Ապետնակի
2. Արաբյան Կարեն
3. Բեգլարյան Հայկ Բարսեղի
4. Բալյոզյան Բաֆֆի
5. Հակոբյան Արման Մաքսիմի
6. Օհանջանյան Էմին Ռուբենի
7. Բեգլարյան Վահրամ Վլադիմիրի

2)Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ընկերության կանխատեսումները 2012թ.-ի 2-րդ եռամսյակի արտադրվելիք էլեկտրաէներգիայի ծավալների համար հետևյալն է.

«Մարսանգ»ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 19,170,000կվտ/ժամ

«Թրդե կասկադ»ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 12,350,000կվտ/ժամ

«Մատաղիս 1» ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 2,040,000կվտ/ժամ

«Մատաղիս 2» ՀԷԿ-ի արտադրանքի կանխատեսումներ՝ 1,300,000կվտ/ժամ